ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Գիտությունն ու կրոնն իրենց բնույթով աշխարհի բացատրության տարբեր, միմյանց հակադիր մեկնակետերում են: Գիտությունն հիմնված է փորձի վրա, կրոնը՝ Աստծո խոսքի: Գիտությունն ամեն ինչ կասկածի է ենթարկում և պնդում, որ հավերժական ճշմարտություններ չկան, մինչ, կրոնի առանցքում Աստծո գոյության և նրա խոսքի՝ որպես բացարձակ ճշմարտության հանդեպ կույր հավատն է:

Գիտական ճշմարտությունները էապես տարբերվում են կրոնական ճշմարտություններից: Վերջիններս հավակնում են լինել իրականության մասին վերջնական, բացարձակ պնդումներ, Աստծո խոսք, որը ենթակա չէ ժամանակի ազդեցությանը: Այս է պատճառը, որ Քրիստոնեական կրոնի ծաղկման ու հզորության ժամանակաշրջանում գիտությունները զարգացման շատ քիչ հնարավորություններ ունեին: Օրինակ, Երկրի գնդաձևության և Արեգակի շուրջ նրա պտտման գաղափարը Քրիստոնեական կրոնի բարձրագույն ներկայացուցիչները երկար ժամանակ չէին ընդունում և կատաղի հալածանքների էին ենթարկում նման գաղափարներ արտահայտողներին, ստիպում նրանց հրապարակավ հրաժարվել իրենց գաղափարներից:

Կաթոլիկ եկեղեցին մեր ժամանակներում ձգտում է հնարավորինս հարմարվել գիտության նվաճումներին, փորձում է զարգացնել այն միտքը, թե գիտությունն ու գիտական հետազոտությունները քրիստոնեական հավատի հետ անհամատեղելի բաներ չեն: Եկեղեցու այրերը փորձում են ներողություն խնդրել իրենց նախորդների մոլորությունների համար և վերականգնել ժամանակին հալածանքների ենթարկված գիտնականների բարի անունը: Եվ այսպես, չորս հարյուր տարի անց՝ 1979 թ. Հռոմի պապ Հովհաննես Պողոս երկրորդը առաջարկեց ճանաչել Գալիլեյի հանդեպ կաթոլիկ եկեղեցու անարդար վերաբերմունքը, իսկ 1992 թ. Վատիկանը պաշտոնապես ճանաչեց որ Երկիրը անշարժ մարմին չէ, և այն իսկապես պտտվում է Արեգակի շուրջը:

Սակայն սխալ կլինի մտածել, թե քրիստոնեությունը, ժամանակակից մարդու համար բացարձակապես անօգտակար մի բան է: Ամենևին: Կրոնն առաջին հերթին մշակութային արժեք է ներկայացնում, այն առումով, որ մեզ գիտելիքներ է տալիս մարդու բարոյական աշխարհի մասին: Ամենքիս է հայտնի Աստվածաշնչում ձևակերպված բարոյականութ-

յան ոսկե կանոնը, նշանավոր տասը պատվիրանները և այլն: Կարևոր է նկատել նաև, որ կրոններ ստեղծել են աշխարհի բոլոր ժողովուրդները: Սա ցույց է տալիս, որ մարդ էակը գերբնականի հանդեպ հավատի անմարելի պահանջմունք ունի: Այն թաքնված է մարդու էության խորքերում և բնավ էլ ժամանակավոր, ինչ-ինչ հասարակական իրողություններով պայմանավորված երևույթ չէ, քանի որ այսօր էլ, գիտության հաղթարշավի պայմաններում, կրոնները չեն վերանում: